ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-438[1] - 24.11.2022-ՏՀ-011/0) վերաբերյալ ներկայացված առաջարկների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկու-թյունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածում «Պետական տուրքի մասին» օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս առաջարկվում է ուղղել օրենքի հերթական համարը՝ «ՀՕ-186-Ն» ձեւակերպումը փոխարինելով «ՀՕ-186» ձեւակերպմամբ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Միատեսակ մոտեցում կիրառելու և տուրքի գանձման գործընթացը պարզեցնելու նպատակով առաջարկվում է օրենքի 7-րդ հոդվածում լրացնել միայն «ժե» պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ՝ «ժե) ֆիզիկական անձանց կողմից սեփականության իրավունքով իրենց պատկանող ավտոմեքենան այլ ֆիզիկական անձանց օտարելու դեպքում տվյալ տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման գրանցման համար, եթե ավտոմեքենան օտարվում է այն ձեռք բերելուց (սեփականության իրավունքի պետական գրանցումից) հետո՝ 365 օրվա ընթացքում: Սույն պարբերության իմաստով՝ ավտոմեքենա ձեռք բերել չի համարվում գույքի՝ ժառանգությամբ կամ նվիրատվությամբ ստացումը, իսկ օտարում է համարվում՝ մեկ ֆիզիկական անձից այլ ֆիզիկական անձին ավտոմեքենայի սեփականության իրավունքի փոխանցումը՝ որեւէ ձեւով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի) կամ անհատույց:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Հոդված 2	Նախագծի 1-ին հոդվածում կատարված փոփոխության արդյունքում առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածում	Ընդունվել է:	Ընդունվել է:

			«ժե», «ժզ» եւ «ժէ» պարբերություններով» բառերը փոխարինել «ժե» պարբերությամբ» բառերով:		
4.	ՀՀ կառավարություն	Հոդված 3	Նախագծի 1-ին հոդվածում կատարված փոփոխությամբ պայմանավորված՝ առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածում «հաշվառումից հանելու» բառերը փոխարինել «տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման գրանցման» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	Հոդված 4	Հստակեցման նպատակով առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածով լրացվող նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Ֆիզիկական անձանց կողմից այլ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքով իրենց պատկանող ավտոմեքենայի օտարման դեպքում տվյալ տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման գրանցման ծառայության մատուցման պահ է համարվում այդ ավտոմեքենայի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման գրանցման պահը:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	ՀՀ կառավարություն	Հոդված 5	Հաշվի առնելով 1-ին հոդվածում կատարվող փոփոխությունը և այն, որ դրա արդյունքում հարկային մարմնի եւ Հայաստանի Հանրապետության ոստիկանության միջեւ տեղեկատվության փոխանակման անհրաժեշտություն չի առաջանում, առաջարկվում է նախագծի 5-րդ հոդվածից հանել «Սույն օրենքի 7-րդ հոդվածի «ժե» եւ «ժզ» պարբերություններով նախատեսված տեղեկատվությունը հարկային մարմնի եւ Հայաստանի Հանրապետության ոստիկանության միջեւ փոխանակվում են փոխհամաձայնեցված կարգով» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
7.	ՀՀ կառավարություն	Հոդված 5	Նախագծի 5-րդ հոդվածում դասական թվականների ճիշտ գրելաձեւն ապահովելու նպատակով առաջարկվում է «36.1-րդ» բառը փոխարինել «36.1-ին» բառով: Միաժամանակ, «լրացնել «20.2-րդ հոդվածով» բառերը» բառերը փոխարինել «լրացնել «20.2-րդ»	Ընդունվել է:	Ընդունվել է:

			բառը» բառերով:		